

— արդ ամբողջապես, քանակապես չեղբայրների 3 հարյուրմեկն էն է
 և մարդան իտիքն է, 3 հարյուրմեկն է, արդ ամբողջապես չեղբայրների
 3-ի մեկն ամբողջապես մեկն ամբողջապես չեղբայրների 3-ի մեկն
 ամբողջապես չեղբայրների 3-ի մեկն ամբողջապես չեղբայրների 3-ի մեկն
 ամբողջապես չեղբայրների 3-ի մեկն ամբողջապես չեղբայրների 3-ի մեկն

ՆՈՐԱԳՈՅՆ ՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐ

**ԳԵՐԿԱՍՏԱՆԻ, ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԵՒ ՊԵՏՈՒԹԵԱՆ
 ԵՐԿՐԱՆ ՄԱՍԻՆ. *)**

Ա. ՊՕԶՈՐԱՅԻ.

Թ. ԳԼՈՒԽ

ԵՐԵՎԱՆՈՒԹԻՒՆ.—ՏԵՂԵՎՏՈՒԹԵԱՆ ՎՐԵՑ ԻՄԼՈՒԹԵՒ ՀԱՍԱՐԱ-
 ԿԵԿԱՆ ԿԵԱՆՔ.—ՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՐԿՐԱՆ.—ՄԿԶԵՎԱԿԱՆ ՊԵՏՈՒ-
 ԹԵԱՆ ԲՆԱՌՈՐՈՒԹԻՒՆԸ.—ԻՐԵՆԵՐԻ ՍՊԵՆՍԵՐԻ ԿԵՐՈՒՄԸ.



Մտանում են, որ մինչև անգամ տարրական Հասարակու-
 թիւնների մէջ միութիւնների նորոգման մշտապէս շարժման
 կողքին, որով նրանք առաջանում են, կայ նաև տեւականու-
 թեան, կայունութեան (stabilité) մի տարր։ Առանձնացած ան-
 Հատների սեռերի Հակադրութիւնը նրանց ստիպում է միանա-
 լու, կազմելու քիչ թէ շատ յարակից, աւելի լաւ ասած՝ ըն-
 տանեկան զոյգեր։ Բայց այս անՀատները չեն ծագել միայնա-
 ւորութիւնից, նրանք մասն են կազմում ուրիշ աւելի Հին մի-
 ութիւնների, որ երբեմն, զեռ էլի գոյութիւն են ունենում։
 Ուրեմն տեւիչ և գացէ կլանը **) զէտք է նկատել իրբև Հասա-
 րակութեան կայունութեան Հասարակական արտայայտութիւնը,
 որը Հաճաւակ գերդաստանի մէջ նկատուող երևույթին, որ է
 Հանդիչի մի սերունդով, — շարունակում է սերնդից սերունդ։

*) Տե՛ս Ազգ. Կանգ. գիրք Դ.

**) Յիշելու է մեր ասածը կլանի մասին. — աս մի միութիւն է, Կիւ-
 նուած ազգակցութեան գաղափարի վրայ, թէ՛կուզ այս ազգակցութիւնը առ-
 երեւիք էլ լինի և նամակցութիւնից կախուած։

Ինչ անհնարին է նկարագրել այստեղ Հասարակական զարգացումը. նա, անշուշտ, փփփփփ է, նախելով մարդուն և նրա միջավայրին: Երբ մարդկային Հասարակութեան կենդանական գրութիւնից ենք սկսում, չենք կարող խօսել Ինքնակենդանութեան (institution) մասին: Անկերպաբանութիւնը (amorphisme) աւելի բառակ է սկզբնական էականերին, էվոլյուցիայի ստղմին: Պարզ Բնութիւնը, որ սկսում է գործել՝ (raisonner), ստիպում է մարդկանց յաղուրդ տալ իրենց կարիքներին, նախելով թէ ինչ է պահանջում նրանց անհասական բնատրութիւնը, և ինչ է թող տալիս միջավայրը: Այս բնական գրութիւնը, որ աւելի առաջ է քան Ինքնակենդանութիւնը, որի վրայ մատնանիշ են արել Հօսն ու Ռուսսօն, զուցէ ամենաորոշն է: Այս գրութիւնից մարդիկ զուր չեն գալիս յանկարծակի և ոչէլ մի գաշինջով. մարդկութիւնը նրանից ազատում է փոքր առ փոքր, առանց միատեսակ պրօցէկի ենթարկուելու: Այն ժամանակ ամէն մարդ ազատ է նախելով իւր ուժերին, որոնց զարգացնում է Համաձայն իւր բնագումներին, սխալ կերպով դատողութիւններ անելով, որ առաջ է գալիս՝ քնդհանրապէս իրերը չնանաչելուց. նրա դատողութիւնը լոգիկական է և Հաստատ, բայց վատ Հիմնատրուած: Այս առաջին միջոցում Ինքնակենդանութեան խառնուրդում է այն անգնութիւնից, որով արտայայտում է մարդու եռանդը իւր միջավայրում, և այս վերջինին նպատասար և աննպատակ պայմաններից: Ենթադրել ընդհանուր անտարբերութեան մի ստիպողական գրութիւն, ինչպիսին է Խառնակեցութիւնը, կամ այն՝ որ ծագում է տղամարդի ստորադրման վիճակից՝ նշանակում է դատապարտել նախնական մարդուն Ինքնակենդանութեան, որով էվոլյուցիան չէ կարող բացատրուել: Պէտք է սեռական յարաբերութիւնների, ինչպէս և սկզբնական յարաբերութիւնների, մէջ տեսնել Հասարակչութեան անհաստատութիւն, ներդաշնակութեան պակասութիւն, Համեմատութեան անհաստատութիւն, որ ըստ Սպինոզի կարող էր յառաջացած լինել անհաստատութեան առանձնաբերութիւնից, միջավայրի մարդու վրայ արած ազդեցութեան եղանակից, որին մարդն տրիպուած յարմարեցնում

է իւր կեանքը: Նախնական ժամանակները սեռական զգացումներին զգացում տալիս ներգործում էին ծածուկ ոյժեր, որոնք որաշելով անհատական սիրոյ բնագրական ձգտութիւնը միացնում էին սեռերին և այս սիրոյ ոյժը գործում էր այս ուղղութեամբ, մինչև որ ուրիշ բնագոյումներ կամ ուրիշ ոյժեր նրան չեզոքացնէին: Ահա, ուրեմն, կեանքի մի կենդրոն և լուծիչ տարրեր, ահա նաև պատճառը այն բազմազան երևոյթների, որոնք արտայայտում են սկզբնական ուժերի զանազան յերկուրումները (combinaison): Առանց մանրամասնութիւնների մէջ մտնելու, տեսնք, որ բազմակեցութիւնը, բազմալլութիւնը, լեզվաբար, ասեանգմամբ ամուսնութիւնը, մայրիշխանութիւնը, ինքնազգայի կառավարութիւնը, ժողովներով կառավարելը, ինչպէս նաև շատ ուրիշ յերկուրումներ, այնպիսի ձևեր են, որոնք ոչ թէ ենթադրում են մի միակ համաշխարհային առաջադիմութիւն, այլ արտայայտում են սկզբնական ուժերի հակադրութիւնը լուծելու զանազան ձևեր: Արդէնպէս այս բոլոր առանձնորից յետոյ չի կարելի ընդունել, որ մարդկային հասարակութեանը իբրև սկիզբ ունեցած լինի գերդատտանը: Արեան բնագրական ուժին, սեռական միութեան տարրական անհրաժեշտութեան վրայ պէտքէ ստեղծանել և յերկուրել համակեցութիւնը (syndicose), որ ձգտում է տերրիտորիալ դառնալու, և յառաջանում է ինքնադաշտապանութեան հիմնական կարիքից: Այս համակեցութիւնը ենթադրում է ընդհանրական գործակցութիւն, յարաբերութիւններ՝ որոնք յառաջանում են հանդիպից, համակրանքից ուրիշների պահանջներին դիջելու անհրաժեշտութիւնից: Նա ենթադրում է նաև ընդհանրական գործակցութիւն, ոչ թէ մարդու և կնոջ, հօր և որդու մէջ, այլ մարդը մարդու հետ:

Ուրեմն հասկանալի կը լինի, թէ պետութեան, կամ աւելի լաւ, քաղաքի հասարակութեան ծագման խնդիրը ինչ լուծում պիտի ունենայ: Սպենսերը, որ այս կէտի վերաբերութեամբ յաճախ շատ որոշ հայեացքներ ունի՝ Սիւմներ Մէնին քննելով մի նկատողութիւն է անում, որի վրայ պէտք է ու-

շաղկապներն զարմեցնել *): Մէնը, պնդելով արեան կապակցութեան սկզբնականութեան գաղափարի վրայ՝ ասում է. «Պէտք է ընդունել, որ նախնական բոլոր հասարակութիւնները իրենց համարում էին միեւնոյն ծագումից յառաջացած. այլապէս անհնարին է բացատրել նրանց քաղաքական միութեան պահպանութիւնը.... սկզբում արեան կապակցութիւնը միակ հնարաւոր պատճառն է եղել քաղաքական գործակցութեան...»: Սուրան Սպենսէրը պատասխանում է. «Եթէ նախնական հասարակութիւն տանով հասկանանք նրանց, որոնց մասին ունենք պատճական տեղեկութիւններ, և եթէ սահմանափակուենք միայն սեմական և արիական հասարակութիւններով, — այս գէղքում այդ ենթադրութիւնը ընդունելի կ'լինի. բայց նա չի կարող հաստատուել ուրիշ ժողովուրդների վերաբերութեամբ»: **)

Քաղաքական գործակցութեան բնուորութիւնը յայտնի լինելով (որ ըստ Սպենսէրի, առաջանում է հասարակական տարրեր խմբերի մէջ ծագող ընդհարումներից), — տեսնում ենք, որ նա աւելի հեշտութեամբ հաստատում է այնտեղ, ուր ժողովուրդը կազմուած է միեւնոյն նախնիքից առաջացած անձերի համախմբումից. բայց և այնպէս՝ մի քանի գէղքերում մենք այն գրաւում ենք նաև այնտեղ, ուր անհատների մէջ առաջինի ոչ մի յարաբերութիւն գոյութիւն չունի: Ըստալիական մի տոհմի անդամները, որոնք միանում են մի ժամանակաւոր առաջնորդի տակ, մի ուրիշ տոհմի գէմ պատերազմելու համար, լին սերտած մի ընդհանուր նախնիքից, և նրանց մէջ չկայ ոչ մի ազգակցական կապ:... Հիւսիսային Ամերիկայի ինդիկները, որոնց մէջ մարդիկ տարբեր սեռեր ունին, որը ցոյց է տալիս թէ տարբեր նախնիքներ են ունեցել, և որոնք 20,000 շտի են, 70 գիւղերի մէջ ջրուած՝ կազմակերպել են մի շատ բարդ, ընդհանուր կառավարութիւն: ***)

Պէտք է նկատել, որ Սպենսէրի այս դիտողութիւնը, թէև շատ ճիշտ, բայց բաւական պարզ չէ և մի ընդհանուր արժէք չունի: Նա պարզ չէ, որովհետև լատ չէ հասկացում, ինչպէս

*) Principes de Sociologie Vol. I. p. 321.

**) Երկ. հր. 321.

***) Principes de sociologie V. II հր. 321.

և Principes de sociologie-ի շատ տեղերում, թէ Սպենսերը պետութեան մասին խոսելիս արդեօք նրան վերցնում է իբրև քաղաքական հասարակություն, թէ իբրև իսկական կառավարություն այս վերջինս միշտ մի գործիք (instrument), մի ղեկավարող միջոց չէ, ձևացած և կազմակերպած այնպէս, ինչպէս Սպենսերն է ասում որովհետև իրեն լսողները բնաւորութեամբ նա գոյութիւն չունի տարրական և քիչ կցորդ հասարակական կազմակերպութիւնների մէջ: Այդպէս՝ յիշատակելով քաղաքական կազմակերպութեան ամենատեղեւորական և տարրական գոյութիւնները, ուր, նրա ասելով, այս կազմակերպութիւնը գոյութիւն չունի՝ նա օրինակ է բերում էսքիմաներին, որոնք ասկում են ասանձին խմբերով, և որոնք, բոտ չերևի՝ չմի կառարեալ աղատութեան մէջ են գտնոււմ, ոչ ոք չէ ձգտում իշխանութիւն բանեցնել և չէ կամենում մի ուրիշի իշխանութիւնը նահանջել: Չիպկվէյներին, որոնց մէջ չկայ ուրիշ հեղինակութիւն, քան բնատրութիւնը, որ շատ բան չէ. նոյնպէս և Պապատոներին, Ալֆորտներին և ուրիշ տոհմեր: Բայց Սպենսերը բարձակումը և պաշտպանութիւնը համարում է այնպիսի մի այժ, որ սրտում է կառավարչական գործիքի կազմակերպութիւնը. չամէն անց հասարակութիւնների մէջ ծագած պոտերազմները ստեղծում են կառավարութեան գործիքը և ծնում են ուրիշ պոտերազմներ, որոնք կառարեւագործում են այս գործիքը, որը աւելացնում է կայլէկտի գործանւելութեան ազդեցութիւնը շրջապատող հասարակութիւնների դէմ: ^{*)} Բայց դրանից, քաղաքական կազմակերպութիւն ասելով պէտք է հասկանալ հասարակական կազմակերպութեան այն մասը, որ գիտակցաբար կառարում է կառավարողի և սանձի գեր յզուտ հասարակութեան: ^{**)} Բայց կան տարրական հասարակութիւններ, ուր երևան չեն գալիս հասարակական շահեր, ինչպէս և

^{*)} Principes de sociologie V. III. 37. ձառ պէս է այս կարծիքը, թէ պետութիւնը կախում է կուսի կարգից: Պետութիւնը, որպէս մի ներքին իրաւական միութիւն, բնաւորում է ներքին կայելից և համակրական շարժաւթիւնից:

^{**)} Անգ. V. III. p. 336.

կան Հասարակութիւններ առանց քաղաքական կազմակերպութեան:

Միւս կողմից՝ պետութեան և նրա գործունէութեան (fonction) գաղափարը՝ ըստ Սպենսերի՝ Համադաստախմբում է նրա անհատականութեան կրիտերիումին, որի շնորհիւ այս գործունէութիւնը լանդում է ամէն մի անհատի ազատութիւնների ըստ Կանտի իրաւաբանական կրիտերիումի ճշմարիտ գոյութիւնը ապահովելու և Հասարակութիւնը արտաքին թշնամիներից պաշտպանելու, արաքիտով պետութիւնը գաւնում է սոփադական որժի օրգան: Այս գաղափարը գտնում է քաղաքական Հիմնարկութիւնների կազմակերպութեան մասին նրա լարճնած կարծիքներից շատերի մէջ: Սպենսերի Հայեացքով, այս Հիմնարկութիւնները միշտ արտաբարում են այժ, սոփադական գորութիւն, Հարկադրող իշխանութիւն *):

Բայց Հակառակ Սպենսերի այս տիրող գաղափարին՝ երբեմն կարելի է կատկածել, որ այն, ինչ որ Կանտը է՝ չէ կարող բնորոշուել որպէս սոփադական: Այդ նկատում է՝ երբ ուսումնասիրում ենք այն տարբերութիւնը, որ կայ պատերազմական տարրի կամ օրգանի (արտաքին պաշտպանութիւն) և բան քաղաքական տարրի մէջ, որը գաւնում է արաքիտ, Հէնց որ սկսում է Հրամարել և կարգադրել Հասարակութեան ներքին կեանքը **):

Յամենայն դէպս, քաղաքական Հասարակութիւնը որոշելիս, իմ կարծիքով, անհրաժեշտ է, աւելի քիչ նշանակութիւն տալ իշխանութեան գոյծիւն, քան իրեն, քաղաքական Հասարակութեան, պետութեան և նրա Հական գերին: Տարրական Հասարակութիւնների մէջ գուցէ նոյն-իսկ չկայ կառավարութեան յատուկ գործիք, և սակայն կայ պետութիւն, որովհետեւ այս Հասարակութիւնը քաղաքական է, քանի որ նրա գոյութեան իրական շարժառիթը ուրիշ է քան տրեան շարժառիթը: Մի քանի տուհեր, յինչպէս Պապուասները, Ալժիրուներ-

*) Principes de Sociologie I, III, 41-4, 84- նաև Justice, և L'Individu contre l'Etat.

**) Էնդ. I, II, 47- 102 և լսդ.

բը, և Գայլիմայ կղզու բնիկները: չունին պետ. արտեղ մարդիկ ապրում են այնքան հաշտ և եղբայրաբար, որ կարիք չունին ուրիշ իշխանութեան՝ բացի իրանց նախնիքների որոշումներից: Տոպաները չունին զինուորական կազմակերպություն, ոչ էլ քաղաքական պետ, նրանք խաղաղասէր են, մեղմ և քաղցրաբարոյ *): Արդեօք կարելի է ստել, թէ այս Հասարակութիւնները պետութիւններ չեն: Ո՛չ, որովհետեւ նրանց մէջ գոյութիւն ունի մարդկային յարաբերութիւնների մի որոշ կարգ: Իսկապէս, պետութիւնը միեւնոյն չէ՝ ինչ որ է—~~էրազ~~ գաղութիւն (appelé *reil gouvernemental*), միւս կողմից, քաղաքական Հասարակութիւնը մի միայն ենթադրում է շատ թէ քիչ ուժգին, բնդհանուր գործակցութիւն, նա յտաշխանւմ է Համակեցութիւնից, որ ձգտում է գտնաւա, և գտնում էլ է տերրիտորիայ, ինչպէս և գործակցութեան Հասարակական ձևի տեսականութիւնից, այն ձևի՝ որ Հիմնուած է ներկայ ազգաբնակութիւնից առաջ, և շարունակում է իւր գոյութիւնը կանոնադր կերպով, նաեւ երբ արտազգայնակութիւնը մեռնում է, թաղանելով կենդանի տեղանց: Ի նկատ առնելով ամենակցընական Հասարակութիւնների ներքին Համանմանութիւնը, կարելի է հասկանալ, որ արդտեղ գոյութիւն ունի գործադրութիւնների (fonction) և օրդոնների գանադանումն, թէև անկասար աստիճանի, որ խանդարում է պետութիւնը պարզութեամբ տեսնելու: Բայց այս Համանմանութիւնը բացարձակ չէ, որովհետեւ, եթէ արդպէս լինէր՝ Հասարակութիւնը գոյութիւն չէր ունենայ: Կայ նաեւ և առաջ սեռերի Հակադրութիւն, որ գտնում է անմիջական որսաճառ, բնտանական (domestique) գործակցութեան, կայ և Հասակի ու բնդունակութիւնների Հակադրութիւն. Հասակի Հակադրութիւնը որոշում է բնտանական, ինչպէս և Հասարակական գործակցութիւնը. նա է անկասկած գերդատտանական և քաղաքական կեանքերի ոկգրնական խտանակութեան պատճառը. իսկ բնդունակութիւնների

*) Յիշեալ գիրքը, եր. 28. Արդեօք շատ զեղքերում յիշում է այն բնդհանուր միայր, թէ կան Հասարակութիւններ, առանց կառավարութեան: Տեսնել *L'individu contre l'Etat*.

և հաշակների հակադրութիւնը պատճառ է լինում Հասարակական ընդհանուր, ընդարձակ գործակցութեան, որով բնորոշում է քաղաքական պետութիւնը՝ որպէս օրդան։ Հետևապէս և՛ կարող էր գոյութիւն ունենալ նախնական, Հասարակական քաղաքական մի անորոշ ձև։ Այս ձևի մէջ՝ քաղաքական կապը թւում է հիմնադեղ պետք է լինէր ընդարձակ գործակցութեան վրայ, մի ընդհանուր նպատակը համար, և այս գործակցութիւնը պետք է պահպանուէր համակցութեամբ մի որոշ երկրի վրայ, որ փափոխական է՝ եթէ Հասարակութիւնը թափառական է, և Հաստատուն՝ եթէ նա նստակեաց է։ Այստեղ պետութիւնը կայանում է Հասարակական էակի գրութեան մէջ, համաձայն նրա փարզկալին մտաւոր կեանքի սկզբունքներին՝ կապիտ և նիւթական ձևք, որ նա կրում է, քիչ նշանակութիւն ունի, սա միայն թող է ապիս ենթադրելու, որ բանականութիւնը նրան գիտ չէ լուսաւորում, բայց աղ լսմանակապիտ արտաքինը պարունակում է բանական ապագայի սաղմ։ Այդ տեղ կայ պատմական անհրաժեշտ պայման, որ նա ապագայում սուելի մեղմ և անելի խոր էրաբանութեան ձևեր բնգունէ։ Արանից հեռւում է, որ փորձի և գործարարութեան պակասութեան, և բանականութեան ոչ ամբողջական զարգացման պատճառով, վաղեմի մարդը մեծ մասամբ կենդանական կեանքով է ապրում, բայց երբ այս պատճառները մեկնում ենք ապագայի արդիւնքների համեմատ, որ մեղ բարձի են՝ տեսնում ենք, որ այս նախնական և անկապ ձևերը, այս նիւթական և կոպիտ Հաստատութիւնները, միակ հնարաւոր և բանական են եղել այն ժամանակուայ պարագաների մէջ։ Այս բոլորի մէջ միշտ հետամուտ են լինում, թէև տարբեր ճանապարհներով, ձևք բերելու հասարակութիւն, ներդաշնակութիւն, փարզկալին կարգ ու կանոն, որը և միշտ կազմում է պետութեան նպատակը։

Նախնական (rudimentaire) ժողովուրդներից կարելի է շատերին քշել, որ բնութեամբ քաղցրաբարոյ են և բարի, վարժունքի մէջ անկեղծ են և եղբայրական և բնազդաւորով մեղմ։ Նրանց համար հարկաւոր չէ սոփիստական ոյժը՝ ինչպէս

արդ զնոյւմ է Սպինսէրը: Կարելի է յեշել Քաղաքներն և քի-
մաշներին, որոնք, ըստ Հոգգտնի, անբաղթելի յաժառութեամբ
ընդդիմադրում են վատ հակումներին:— Լեպշաներին, որոնք
աւելի շուտ մեծ գրկանքներ կը կրեն, քան թէ լանձն կառնեն
հնչում և տնարդարութիւն:— Սանտալներին, որոնք պարզ են,
և արդարաթեան տմենաշերմ զգացումն ունին: Սուժաարա կրդ-
զու հարուստին ժառի փակիւսներին, որոնք միանգամայն ան-
վնաս, քաշ, բայց խաղաղ ժաշկուրդ են և հապտակում են
միմիայն ժողովրդից բնարուած պետերին: Այս բոլորի, ինչպէս
և շատ արիշ արդիւի ժողովուրդների մէջ, նկատում է այն,
ինչ որ Սպինսէրը արագէս է որոշում: Երբեք իրաւունքների
շերմ զգացմունքի հետ միաժամանակ մի հաղուստիւս պատ-
կաւանք դէպի տարի իրաւունքը»:

Արանից յետոյ, երբ արա յատկութիւններին որոշ տոտինան
գիտակցութիւն վերադրենք, կարելի է որպէսք մերժել իրաւա-
բանական կտոր, որ յառաջացնում է պետութիւնը *):

Դեռ միւս, ժառերիալիտական, բարդ, ուժեղ, տերտ մի-
ութիւն աննշող ժողովուրդների մէջ էլ կարելի է տեսնել, բուն
մարդկային յատկութիւններ և այն կրեւթիւր, որ փոքր տ-
փոքր իրականանում է,— արինքն եղբայրութեան և արդարա-
թեան մարդկային իղէալլը: Եթէ մենք նախ ի նկատ տեսնեք
անտանութեան մատիկ, իրաւ, բնազգամբ գործող մարդուն և
ապա դառնանք դէպի մարդկային իղեալը՝ որ բնկերացած է
ազատ և իրաւական գործակցութեան սկզբամքով, մենք կը
համոզուինք, որ արա պարզ, բարի բնազգումներով օժտուած,
բայց տարբական և թաւմնայ հասարակութիւնները բաւական
չէին զսկսցում տարու մարդկային ձգտումներին և որ ցանկա-
լի իղէալին չէ կարելի հասնել առանց երկար աշխատանքի:
Եւ ինչ է յիշուի պտտմութիւնը, կամ, աւելի լաւ՝ ինչն է մարդ-
կային էվոլյուցիայի արդիւնքը, եթէ ոչ մի յարատեւ և զժուա-
րին զատարարութիւն, անընդհատ պատրաստութեամբ բարձ-

*) Մարդկութիւնը իրաւունքը (պետութեան պաշտօնն ու նպատակը),
բաղձանակի տարու համար բոլոր միջոցները գործադրելուց յետոյ ձգտում է
պտտմադրի երկնազով յառաջացնել հասարակութեան մէջ արդարութիւն:

րանալու նախնական կողմնակցությանից դէպի ամենաբարձր և ամենակատարեալ բանական վիճակը:



Ժ. ԳԼՈՒԽ

ՀՆՏՈՆԵԿՆԵՆ ԵՒ ՔԱՂՈՔՆԵՆ : ԵՄԵՐԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ. — ՄԻՋՆՈՐԻՆԵՐ. — ԶԻՒՄԻՆԻՆ ԴՇ ԿՈՒԼԸՆԺ. — ԻՆԵՐԿԵՆԿ.

Քաղաքական պետութեան ծագումը որոշելիս զուցէ անյաղթելի արդեւք է հանդիսանում այն հանգամանքը, որ նախնական ժողովուրդները իրենց կարիքները շատ խոտն և անկապակից ձևով են յազեցնում, և որ հասարակական էվոլյուցիայի մէջ պակասում է միակ և միատեսակ պրոցըս: Ընհանրին է որևէ դէպքում, և որևէ ժամանակ, անտես առնել արեւնակցութիւնը, համայնակեցութիւնը և որանցից յառաջացած անհատական դրութիւնը: Արանք են բոլոր հասարակական միութիւնների մնային կապերը, որովհետեւ յենում են ժարդոս — անյաղթելի խորհրդի վրայ: Արեւնակցութիւնը անհրաժեշտորէն զերազանցութիւն է տալիս նախանշողներին, կամ նրանց՝ որոնք համարում են այդպիսի: Համակեցութիւնը միևնոյն տեղում տալիս է զերազանցութիւն տազանդներին, որոնք ծագում են բնականութիւնների տարբերութիւնից: Ար տարբեր գրութիւնները հասարակութեան մէջ նկատուած ներդաշնակութեան բացակայութեան ստղմերն են կազմում, հասարակութիւնը ցանազան միջոցներով որոնում է մի կանոնաւորուած դրութիւն, որոշեալ կարգ ու կանոն, հասարակչութիւն, որ, միշտ անկարուն լինելով հանդերձ՝ ձգտում է կարեւորութեան, իւր ուժերի և տարրերի ծաւալման պատճառով:

Իսց այս երկու, արեւնակցութեան և համակեցութեան, զազափարները, որ մեզ այժմ այնպէս պարզ և որոշ են երե-